



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 05 » 04 2021թ.

№ 08/ԼԱ/ - 196

Մարտի 29-ից ապրիլի 4-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Ապրիլի 3-ին առանձի նշրջաններում դիտվել են կարճատև տեղումներ (ապրիլի 1-ին՝ Մասրիկում և Գորիսում, 4-ին՝ Արթիկում, Ջերմուկում և Արագածբարձրլեռնայինում) մինչև 1մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ Տեղումների գումարային քանակը կազմել է մինչև 2մմ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը մարտի 29-ին նորմայից ցարժր է եղել 3-6, 30-ին՝ 2-4, 31-ին և ապրիլի 3-ին նորմայի սահմաններում (1-2 աստիճանով՝ դրական և բացասական շեղումներով), ապրիլի 1-2-ին նորմայից բարձր 1-3, 4-ին նորմայից բարձր 1-4 աստիճանով (Արարատյան դաշտում նորմայի սահմաններում):

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է ապրիլի 4-ին: Տավուշում, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտում գրանցվել է +17...+21°C (Մեղրիում՝ +24°C, Կապանում՝ +23°C), Լոռիում, Կոտայքի, Արագածոտնի, Վայոց Ձորի նախալեռներում՝ +13...+18°C (Արենիում՝ +20°C), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Սյունիքի նախալեռներում՝ +8...+13 (Գորիսում՝ +16°C, Գյումրիում՝ +15°C, Սեմյոնովկայում՝ +5°C) աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է մարտի 29-ին: Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում գրանցվել է -8...-13°C (Աշոցքում՝ -16°C, Ապարանում և Ծաղկահովիտում՝ -14°C, Ֆանտանում՝ -6°C, Շորժայում՝ -5°C), Լոռիում՝ -4...-9°C (Տաշիրում՝ -14°C, Ստեփանավանում՝ -10°C), Տավուշում, Արագածոտնի, Կոտայքի, Վայոց Ձորի և Սյունիքի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ 0...-5°C (Սիսիանում՝ -10°C, Դիլիջանում՝ -7°C, Իջևանում՝ +1°C), Սյունիքի հովիտներում՝ +2...+4 աստիճան:

Ապրիլի 1-ին Աշտարակում և Պուշկինի լքբ.-ում դիտվել է քամի 14-15մ/վրկ, պողթկումները՝ մինչև 20-22մ/վրկ, 4-ին՝ Պուշկինի լքբ.-ում, 17-18մ/վրկ քամու ուժգնացում, պողթկումները՝ մինչև 23-24մ/վրկ արագությամբ:

Ապրիլի 05-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձր լեռնայինում 186սմ, Որոտանի լքբ.-ում՝ 103սմ, Ամբերդում՝60սմ, Զերմուկում՝ 58սմ, Սեմյոնովկայում՝ 29սմ, Հրազդանում՝ 25սմ, Վարդենյաց լքբ.-ում՝ 24սմ, Պուշկինի լքբ.-ում՝13սմ, Ապարան լճ.-ում՝12սմ, Անանունի լքբ.-ում՝5սմ, մնացած շրջաններում ձյան ծածկը բացակայում է:

Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը շարունակել է գտնվել ձմեռային հանգստի շրջանում, միայն Մասրիկումբազմայա միջին արժեքներից 10 օր շուտ, նախալեռնային շրջաններում՝ սովականան ժամկետներում վեգետացիան վերսկսվեց: Արարատում աշնանացանը թփակալեց, Մերձավանում՝ ցողունակալեց:

Նախալեռնային շրջաններում առաջացել է հնդավորների առաջին տերևները:

Հովտային շրջաններում շարունակել է խաղողի վազի հյութաշարժը, Մերձավանում բողբոջները ուռչել են:

Ամսվա վերջի օրերին դիտված բացասական ջերմաստիճանները (-1...-4°C) Արարատյան դաշտում որոշ չափով վնասել են ծաղկած պտղատուներին:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 2սմ-ով և կազմել՝ 1900.64մ (04.04.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 19 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան